## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հունիսի 2019թ. թիվ 392-Ա

### «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգը հաստատելու մասին» թիվ 440-Ն որոշմամբ և հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի 2019 թվականի մայիսի 15-ի թիվ 345-Ա որոշման հիման վրա համակարգչում նախօրոք զետեղված և համակարգչի կողմից պատահական ընտրված 7 թեկնածուների ցուցակը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 11.06.2019թ. ժամը 11.00-ին մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հանձնաժողովի անդամներից հանձնաժողովի նախագահ նշանակել Արթուր Մխիթարյանին, հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Վարդանյանին:

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հունիսի 10
ք.Վանաձոր